ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Էլեկտրոնային եղանակով տրամադրվող լիցենզիաները և ներդիրները տրվում են սույն հոդվածով սահմանված վավերապայմաններին (տեղեկատվությանը) համաապատասխան էլեկտրոնային համակարգում լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գեներացման և արտապատկերման միջոցով»:

Հոդված 2. Օրենքի 23-րդ և 23.1-ին հոդվածներում յուրաքանչյուր «լիցենզիայի» և «լիցենզիան» բառերից հետո համապատասխանաբար ավելացնել «(յուրաքանչյուր ներդիրի)» և «(յուրաքանչյուր ներդիրը)» բառերը:

Հոդված 3. Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը վերջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ.

«Քաղաքաշինության բանագավառի գործունեություն իրականացնելու համար լիցենզիաները տրվում են հինգ տարի ժամկետով:»:

Հոդված 4. Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «17.ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	17. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	**I դաս** Քաղաքաշինական փաստաթղթերի	ԿՄ					Ո	Հ	

	կազմում՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի								
2.	**II դաս** Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի	ԿՄ					Ո	Հ	
3.	**III դաս** Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի	ԿՄ					Ո	Հ	
4.	**I դաս** Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն	ԿՄ					Ո	Հ	
5.	**II դաս** Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն	ԿՄ					Ո	Հ	
6.	**I դաս** Շինարարության իրականացում	ԿՄ					Ո	Հ	
7.	**II դաս** Շինարարության իրականացում	ԿՄ					Ո	Հ	
8.	**III դաս** Շինարարության իրականացում	ԿՄ					Ո	Հ	

9.	**I դաս** Շինարարության որակի տեխնիկական հսկողություն	ԿՄ					Ո	Հ	
10.	**II դաս** Շինարարության որակի տեխնիկական հսկողություն	ԿՄ					Ո	Հ	
11.	**I դաս** Հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցում	ԿՄ					Ո	Հ	
12.	**II դաս** Հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցում	ԿՄ					Ո	Հ	

Հոդված 5. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

2. Քաղաքաշինության բնագավառում տրված լիցենզիաների գործողությունը դադարում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամիս հետո՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը քաղաքաշինության բնագավառում պայմանագրային պարտավորություններ ստանձնած լիցենզավորված անձանց լիցենզիաների գործողությունը (ստանձնած պայմանագրային պարտավորությունների մասով) դադարում է համապատասխան պայմանագրերով ամրագրված պարտավորությունները և պարտականություններն ավարտելուց կամ դադարելուց մեկ օր հետո:

4. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում քաղաքաշինության բնագավառի Լիցենզիաների ձևերի, լիցենզավորման և որակավորման ստուգման անցկացման կարգերում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի «16. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	**16. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**	
16.1.	**I դաս** Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում՝ բացառությամբ կոնստրուկտորական և	բազային տուրքի 80-ապատիկի չափով

	ճարտարապետական մասերի, յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	
16.2.	**II դաս** Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի, յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 40-ապատիկի չափով
16.3.	**III դաս** Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի, յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 20-ապատիկի չափով
16.4.	**I դաս** Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով
16.5.	**II դաս** Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
16.6.	**I դաս** Շինարարության իրականացում յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 160-ապատիկի չափով
16.7.	**II դաս** Շինարարության իրականացում յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 80-ապատիկի չափով

16.8.	**III դաս** Շինարարության իրականացում յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 40-ապատիկի չափով
16.9.	**I դաս** Շինարարության որակի տեխնիկական հսկողություն յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով
16.10.	**II դաս** Շինարարության որակի տեխնիկական հսկողություն յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
16.11.	**I դաս** Հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցում յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
16.12.	**II դաս** Հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցում յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով
16.13.	Քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակի յուրաքանչյուր ներդիրի վերաձևակերպման համար՝	բազային տուրքի 10-ապատիկի չափով
16.14.	Քաղաքաշինության բնագավառի գործունեության տեսակի լիցենզիայի (ներդիրի) կրկնօրինակի տրամադրման համար՝	բազային տուրքի 10-ապատիկի չափով
16.15.	Շարունակական մասնագիտական զարգացման **I դասի** հավաստագիր ստանալու համար՝	բազային տուրքի 50-ապատիկի չափով

16.16.	Շարունակական մասնագիտական զարգացման **II դասի** հավաստագիր ստանալու համար՝	բազային տուրքի 30-ապատիկի չափով
16.17.	Շարունակական մասնագիտական զարգացման **III դասի** հավաստագիր ստանալու համար՝	բազային տուրքի 10-ապատիկի չափով

»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո՝ բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Հոդված 3. Սույն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված փոփոխությունները ուժի մեջ են մտնում քաղաքաշինության բնագավառում **նախկինում** տրված լիցենզիաների օրենքով սահմանված դադարեցման ժամկետից հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքաշինության մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 3. Քաղաքաշինական գործունեության օբյեկտները

1. Քաղաքաշինական գործունեության օբյեկտներ են՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքը.

2) Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների, դրանց խմբերի, հատվածների տարածքները, առանձին հողակտորները.

3) արդյունաբերական, ագրոարդյունաբերական, հիդրոտեխնիկական, էներգետիկ, գիտատեխնիկական համալիրները և հանգույցները.

4) քաղաքաշինական, ճարտարապետական, լանդշաֆտային համալիրները, հանգստի և ժամանցի գոտիները, առողջավայրերը, ջրատարածքները, արգելոցները, հատուկ պահպանության գոտիները, դրանց համակարգերը և բաղկացուցիչ մասերը.

5) շենքերը, շինությունները, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները.

6) ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքները:

2. Սույն հոդվածի 1-ին կետի 1-ին և 6-րդ ենթակետերում նշված օբյեկտների սահմանները որոշվում և փոփոխվում են օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

3. Քաղաքաշինական գործունեության օբյեկտներն ըստ ռիսկայնության դասակարգվում են հինգ աստիճանների, որոնք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացմամբ:»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասում՝

1) «ը» կետի «այլ բան նախատեսված չէ» բառերը փոխարինել «ամրագրված է նման պահանջ» բառերով.

2) «թ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«թ) ապահովել շինարարության որակի տեխնիկական հսկողություն՝ բացառությամբ սույն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված աշխատանքների.»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ պարբերությամբ.

«Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1 - րդ հոդվածով.

«**Հոդված 7.1. Քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան լիցենզիա ունեցող անձանց պարտականությունները և պատասխանատվությունը**

« 1. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված անձը պարտավոր է՝

1) ունենալ պաշտոնական ինտերնետային կայք, որն առնվազն պետք է պարունակի տեղեկատվություն ծառայությունների, մասնագետների վերաբերյալ, ինչպես նաև ապահովի հետադարձ կապի հնարավորություն (պահանջը պարտադիր է I դասի դասակարգում ունեցող լիցենզավորված անձանց դեպքում).

2) քաղաքաշինական գործունեության օբյեկտների վերաբերյալ պահպանել օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունները.

3) ապահովել քաղաքաշինական գործունեության տեսակների գործելակարգով սահմանված աշխատանքների կատարումը.

4) օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել վիճակագրական և այլ տեղեկություններ.

5) իրականացնել Օրենքով սահմանված այլ պարտականություններ»:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 8. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների իրավունքները և պարտականությունները**

1. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների հեղինակային իրավունքները սահմանվում են «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով:

2. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակողները պարտավոր են կատարել քաղաքաշինական փաստաթղթերի մշակման առաջադրանքների և քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները:

3. Քաղաքաշինական փաստաթղթեր մշակող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը կարող են իրականացնել շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն՝ օրենքով սահմանված համապատասխան շինարարության որակի տեխնիկական հսկողության լիցենզիայի առկայության և նախագծային աշխատանքների կապալի պայմանագրում նման պարտավորության առկայության դեպքում:»:

Հոդված 6. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-ին հոդվածով.

«Հոդված 9.1. Շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնողների իրավունքներն ու պարտականությունները

1. Շինարարության որակի տեխնիկական հսկողությունը քաղաքաշինական գործունեության սուբյեկտի կողմից շինարարական աշխատանքների բոլոր փուլերում իրականցվող միջոցառումների համալիր է, որի նպատակն է ստուգել շինարարական աշխատանքների համապատասխանությունը ճարտարապետաշինարարական նախագծերին և գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջներին:

2. Շինարարության որակի տեխնիկական հսկողությունն իրականացնում են քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը:

3. Արգելվում է քաղաքաշինական գործունեության օբյեկտի շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացումը տվյալ շինարարությունն իրականացնող կապալառու կազմակերպության կողմից:

4. Շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող սուբյեկտները պարտավոր են՝

1) ապահովել շինարարական աշխատանքների համապատասխանությունը ճարտարապետաշինարարական նախագծով տրված լուծումներին և պահանջներին.

2) ապահովել շինարարական աշխատանքների նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան իրականացումը.

3) քաղաքաշինական գործունեության օբյեկտի կրողունությանը, կայունությանը և հուսալիությանը սպառնացող թերությունների հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարությունը, ինչպես նաև տեխնիկական վթարների դեպքում 24 ժամվա ընթացքում իրազեկել կառուցապատողին և քաղաքաշինության բնագավառի պետական վերահսկողություն իրականացնող մարմնին.

4) շինարարություն իրականացնող քաղաքաշինական գործունեության սուբյեկտին կամ սուբյեկտներին տալ պարտադիր կատարման ենթակա ցուցումներ՝ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ.

5) պահպանել շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման կարգով սահմանված պահանջները.

6) սույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքում 24 ժամվա ընթացքում իրազեկել կառուցապատողին և քաղաքաշինության բնագավառի պետական վերահսկողություն իրականացնող մարմնին:

5. Շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող սուբյեկտներն իրավունք ունեն՝

1) դադարեցնել շինարարական աշխատանքները, եթե առաջացել է տեխնիկական վթար կամ իր կողմից տրված ցուցումները չեն կատարվել ողջամիտ ժամկետում.

2) հրաժարվել շինարարության որակի տեխնիկական հսկողությունից, եթե կառուցապատողի կողմից ինքնակամ իրականացված գործողությունների արդյունքում գրանցվել է նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների կամ ճարտարապետաշինարարական նախագծային լուծումների խախտում:»:

Հոդված 7. Օրենքի 10-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ը», «թ», «ժ», «ի» և «լ» կետերով.

«ը) հաստատում է հավաստագրման, թեստավորման իրականացման կարգը, հավաստագրերի ձևերը և տրամադրման կարգը, գրանցամատյանի ձևավորման և վարման կարգը.

թ) հաստատում է շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների, ըստ ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական օբյեկտների դասակարգման և քաղաքաշինության բնագավառում լիցենզիա չպահանջող քաղաքաշինական աշխատանքների ցանկերը.

ժ) հաստատում է քաղաքաշինական փաստաթղթերի կազմման, շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության կարգը.

ի) հաստատում է օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեության իրավունք ունեցող մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման (այսուհետ ՇՄԶ) կազմակերպման և հավաստագրման հնգամյա ժամանակացույցը.

լ) քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետությունում գործող կազմակերպությունների նախաձեռնությամբ կամ հրավերով օտարերկրացի մասնագետների մասնագիտական կարճաժամկետ գործունեության թույլտվության տրամադրման կարգը:»:

Հոդված 8. Օրենքի 10.1-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 27-35 կետերով՝

«27) հաստատում է մասնագիտական գործունեության տեսակներին համապատասխան մասնագիտական որակավորումների ցանկը.

28) հաստատում է մասնագիտական բնութագրեր.

29) հաստատում է ՇՄՋ տեսակները, մասնագիտական հանձնաժողովների անհատական կազմը և աշխատակարգը.

30) հաստատում է մասնագետների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը, թեստավորման հարցաշարերը, հայտարարության տեքստի և հավակնորդներին (լիցենզավորվող, հավաստագրվող) ներկայացվող պահանջները.

31) հաստատում է ՇՄՋ ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը և մասնակցությանը ներկայացվող պահանջները, յուրաքանչյուր մասնագիտության գծով շնորհվող ՇՄՋ կրեդիտների քանակը և դրանց շնորհման կարգը.

32) իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեություն իրականացնող մասնագետների գրանցումը.

33) իրականացնում է օրենքով սահմանված դեպքերում ՇՄՋ կրեդիտներ չպահանջող մասնագետների հավաստագրումը:

34) հաստատում է ՇՄՋ կրեդիտների հիման վրա սահմանված կարգով ՇՄՋ հավաստագրերը:

35) իրականացնում է I, II և III կարգերի մասնագետների և I, II և III դասերի կազմակերպությունների գրանցամատյանների վարումը. որտեղ առնվազն ներառվում է մասնագետների անհատական տվյալների (անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան օր, ամիս, տարի), կրթության, որակավորման, մասնագիտացման, մասնագիտական գործունեության և ՇՄՋ հավաստագրերի, լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ տվյալներ (անվանումը և գտնվելու վայրը ազգանունը, անունը, բնակության վայրը և հաշվառման հասցեն), լիցենզիայի գործունեության տեսակի, գործողության ժամկետի, գործողության ժամկետների երկարաձգումների, լիցենզիայի վերաձևակերպման, գործողության կասեցման, գործողության դադարեցման և

ռեյտինգավորում վերաբերյալ տեղեկատվություններ, օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ տեղեկություններ:

Հոդված 9. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ V.1-ին գլխով.

«Գ Լ ՈՒ Խ V.1

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (ՇՄԶ)

Հոդված 11.1. Քաղաքաշինության բնագավառում մասնագիտական գործունեությանը ներկայացվող հիմնական պահանջները

1. Ըստ վերապատրաստման մակարդակի և քաղաքաշինության բնագավառում իրականացվող գործունեության տեսակի՝ քաղաքաշինության բնագավառում մասնագետները (այսուհետ Մասնագետ) ըստ իրենց աշխատանքային փորձի, կատարված աշխատանքների ծավալի և բարդության դասակարգվում են երեք կարգի՝ I, II և III կարգի մասնագտներ:

2. I կարգի մասնագետը, ըստ ռիսակայնության I, II, III, IV և V դասի քաղաքաշինական օբյեկտներում, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներում ներգրաված մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ է, որն ունի համապատասխան բարձրագույն կրթություն ու որակավորում, փորձառություն և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է մասնագիտական գործունեության և ՇՄԶ համապատասխան հավաստագրեր:

3. II կարգի մասնագետը, ըստ ռիսկայնության I, II և III կարգի քաղաքաշինական օբյեկտներում մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ է, որն ունի համապատասխան բարձրագույն կրթություն ու որակավորում, փորձառություն և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է մասնագիտական գործունեության և ՇՄՋ համապատասխան հավաստագրեր:

4. III կարգի մասնագետը, ըստ ռիսկայնության I և II աստիճանի օբյեկտներում մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ է, ով ունի համապատասխան բարձրագույն կրթություն ու որակավորում, փորձառություն (բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքի) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացել է մասնագիտական գործունեության և ՇՄՋ համապատասխան հավաստագրեր:

5. Քաղաքաշինության բնագավառի մասնագիտական գործունեության տեսակներին համապատասխան մասնագիտական որակավորումների ցանկը հաստատում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի որոշմամբ:

6. Այլ պետություններում քաղաքաշինության բնագավառի մասնագիտական կրթություն ստացած անձինք (ներառյալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիները) Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական մասնագիտական գործունեություն կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հիման վրա քաղաքաշինական մասնագիտական կրթության փաստը հավաստող փաստաթղթերի փոխադարձ ճանաչման կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքաշինական կրթության փաստը հավաստող փաստաթղթերի ճանաչման և սույն օրենքով սահմանված կարգով մասնագիտական գործունեության և ՇՄՋ հավաստագրերի առկայության դեպքում:

7. Համապատասխան մասնագիտական որակավորում ստացած և 90 տոկոս և ավելի միջին որակավորման գնահատական (ՄՈԳ) ունեցող անձը՝ III կարգի մասնագետի հավաստագիր կարող է ստանալ, եթե վճարել է օրենքով սահմանված պետական տուրքը և

հավաստագրման հայտը ներկայացրել է ոչ ուշ, քան համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունը ավարտելուց հետո՝ երկու տարվա ընթացքում:

8. Վերջին հինգ տարում առնվազն երեք տարի մասնագիտական գործունեություն իրականացրած և ՇՄՋ կրեդիտների նվազագույն քանակի առնվազն 50 տոկոսը հաղթահարած (բացառությամբ III կարգի հավաստագրված մասնագետների, որոնք ցանկանում են պահպանել նույն դասային աստիճանը հավաստագրվում են առանց ՇՄՋ կրեդիտավորման) համապատասխան ոլորտի մասնագետը մասնագիտական գործունեությունը շարունակելու և ՇՄՋ հավաստագիր ստանալու համար կարող է անցնել թեստավորում և ստանալ ՇՄՋ հավաստագիր:

9. Վերջին հինգ տարում ՇՄՋ կրեդիտների նվազագույն քանակի 50 տոկոսի շեմը չհաղթահարած համապատասխան ոլորտի մասնագետի գործունեությունը ժամանակավոր կասեցվում է մինչև նոր ՇՄՋ հավաստագրի ստացումը:

Հոդված 11.2. Քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակների պատասխանատու մասնագետների ներուժի պլանավորումը

1. Քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակներին համապատասխան պատասխանատու մասնագետների ներուժի պլանավորումն իրականացնում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը:

Հոդված 11.3. Շարունակական մասնագիտական զարգացման կազմակերպման գործընթացը

1. ՇՄՋ-ն իրականացվում է այդ գործընթացի անընդհատության և բազմաձևության սկզբունքների համակցմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ՇՄՋ գործընթացի անընդհատությունն ապահովվում է յուրաքանչյուր հնգամյա շրջափուլով՝ այդ տարիների ընթացքում իրականացված մասնագիտական գործունեության, ինչպես նաև ձեռք բերված գիտելիքների և մասնագիտական հմտությունների գնահատման հիման վրա: ՇՄՋ, ինչպես նաև ձեռք բերված գիտելիքների և մասնագիտական հմտությունների համար շնորհվում են ՇՄՋ կրեդիտներ:

3. ՇՄՋ բազմաձևությունն ապահովելու համար սահմանվու են հետևյալ տեսակները.

1) տեսական գիտելիքների զարգացում՝ Հայաստանի Հանրապետությունում կամ այլ պետություններում մասնագիտական դասընթացներին, սեմինարներին, սիմպոզիումներին, գիտական, գիտագործնական գիտաժողովներին և համագումարներին մասնակցության և (կամ) իրականացման միջոցով.

2) գործնական հմտությունների զարգացում՝ աշխատանքային տեղում մասնագիտական կատարելագործման, գիտագործնական միջոցառումներին մասնակցության և (կամ) իրականացման միջոցով.

3) ինքնակրթություն և ինքնազարգացում՝ հեռավար դասընթացների մասնակցության և (կամ) իրականացման կամ գիտական աշխատանքների, աշխատությունների հրատարակման և (կամ) գործնական ուսումնասիրությունների արդյունքների ներկայացման միջոցով:

4. ՇՄՋ գործունեությունը և շնորհվող ՇՄՋ կրեդիտները յուրաքանչյուր հնգամյա փուլում պետք է լրացվեն սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված գործունեության զարգացման երեք տեսակներով և կազմեն՝

1) I կարգի մասնագետների համար ՝ առնվազն 240 ՇՄՋ կրեդիտ.

2) II կարգի մասնագետների համար՝ առնվազն 160 ՇՄՋ կրեդիտ.

3) III կարգի մասնագետների համար՝ առնվազն 100 ՇՄՋ կրեդիտ.

5. ՇՄՋ ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը և մասնակցությանը ներկայացվող պահանջները, ՇՄՋ յուրաքանչյուր մասնագիտության գծով

շնորհվող ՇՄՋ կրեդիտների քանակը և դրանց շնորհման կարգը սահմանում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը:

6. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված ՇՄՋ տեսակները քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի սահմանած կարգով կարող են իրականացնել տեղական, օտարերկրյա և (կամ) միջազգային հետևյալ կազմակերպությունները.

1) օրենքով սահմանված կարգով քաղաքաշինական կրթական ծրագրեր իրականացնող կրթական հաստատությունները.

2) քաղաքաշինական մասնագիտական հասարակական կազմակերպությունները.

3) շինարարական կամ նախագծային կազմակերպությունները.

4) քաղաքաշինական գործունեություն ծավալող այլ կազմակերպություններ:

Հոդված 11.4 Շարունակական մասնագիտական զարգացման արդյունքների հավաստագրումը

1. ՇՄՋ զարգացման գնահատումն իրականացվում է հավաստագրման միջոցով:

2. ՇՄՋ հավաստագիրը տրվում է հինգ տարի ժամկետով: ՇՄՋ հավաստագրի ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ մասնագետը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում է հաջորդ հինգ տարիների համար՝ ՇՄՋ հավաստագիր ստանալու նպատակով:

3. ՇՄՋ հավաստագիրը տրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների բավարարման և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրք վճարելու դեպքում:

4. ՇՄՋ հավաստագիրը (բացառությամբ Օրենքի 11.1-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով սահմանված դեպքերի) տրվում է, եթե մասնագետը լրացրել է սույն օրենքով սահմանված ՇՄՋ կրեդիտների նվազագույն քանակը և վերջին հինգ տարում ունի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

7. ՇՄՋ հավաստագիր չի տրվում, եթե մասնագետը չի ապահովել սույն հոդվածի 3-4-րդ կամ Օրենքի 11.1-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով սահմանված պահանջները:

8. ՇՄՋ հավաստագրի մերժումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կամ դատական կարգով:

9. Հավաստագրումը, թեստավորումը և մրցույթները իրականացնում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից ընտրված միջոցառում իրականացնող կազմակերպությունները:

10. Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը ՇՄՋ հավաստագրումը կազմակերպելու համար իրականացնում է՝

1) օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեություն իրականացնող մասնագետների գրանցումը.

2) առաջին անգամ մասնագիտական գործունեությունն սկսող մասնագետների գրանցումը և հավաստագրի տրամադրումը.

3) ՇՄՋ կրեդիտների հիման վրա սահմանված կարգով ՇՄՋ հավաստագրի տրամադրումը.

Հոդված 11.5. Քաղաքաշինության բնագավառի մասնագետների իրավունքները և պարտականությունները

1. Մասնագետի իրավունքներն են՝

1) օրենքով սահմանված կարգով իրենց կրթությանը, որակավորմանը և մասնագիտացմանը համապատասխան իրականացնել լիցենզավորման ենթակա և շինարարության թույլտվություն չպահանջվող քաղաքաշինության բնագավառում մասնագիտական գործունեություն.

2) ներկայացնել ապացուցողական նորմատիվատեխնիկական հիմնավորումներ, որոնք նախատեսված չեն քաղաքաշինական փաստաթղթերով.

3) օրենքով սահմանված կարգով մասնակցել ՇՄՋ գործընթացին.

4) օրենքով սահմանված կարգով պաշտպանել իր մասնագիտական համբավը, պատիվը և արժանապատվությունը.

5) օրենքով սահմանված կարգով ստեղծել միավորումներ կամ անդամակցել դրանց.

6) օգտվել օրենքով սահմանված այլ իրավունքներից

7) զբաղբել մասնագիտկան որակավորում պահանջող ձեռնարկատիրական գործունեությամբ:

2. Մասնագետի պարտավորություններն են՝

1) քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնելիս առաջնորդվել քաղաքաշինական փաստաթղթերով սահմանված պարտադիր պահանջներով.

2) իր իրավասությունների շրջանակում պահպանել օրենսդրական և նորմատիվատեխնիկական պահանջները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակել, լրացնել, վարել և շրջանառել քաղաքաշինական փաստաթղթերը և անձնական ստորագրությամբ վավերացնել դրանք.

4) Օրենքով սահմանված դեպքերում քաղաքաշինական գործունեության օբյեկտների վերաբերյալ պահպանել գաղտնիք պարունակող տեղեկությունները.

5) կատարելագործել իր մասնագիտական գիտելիքները և հմտությունները, մասնագիտական որակավորման պահանջներին համապատասխան մասնակցել ՇՄՋ գործընթացին.

6) իր մասնագիտական գործունեությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառում պետական կառավարման մարմնի կողմից հաստատված մասնագիտական բնութագրին համապատասխան.

7) կատարել օրենքով սահմանված այլ պարտավորություններ:

3. Մասնագետները օրենքով նախատեսված դեպքերում պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Հոդված 10. Օրենքի 21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 21. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորումը և լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները**

1.Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը լիցենզավորվում են սույն հոդված 4-րդ մասում սահմանված գործունեության տեսակներին և դասային աստիճաններին համապատասխան:

2. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը իրավունք ունեն լիցենզավորված գործունեություն իրականացնել լիցենզիայի դասին համապատասխան քաղաքաշինական օբյեկտներում:

3. Քաղաքաշինության բնագավառում լիցենզիա չպահանջող քաղաքաշինական փաստաթղթերի կազմման, քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության, շինարարության իրականացման, շինարարության որակի տեխնիկական հսկողության, հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցման աշխատանքների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը:

4. Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներն են՝

1) Քաղաքաշինական փաստաթղթերի կազմումը՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի, որը դասակարգվում է I, II և III դասերի, և ունի հետևյալ ենթատեսակների ներդիրներ.

ա. էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր).

բ. ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարաման և գազամատակարարաման համակարգեր).

գ. հիդրոտեխնիկական (հիդրոտեխնիկական կառուցվածքներ և համակարգեր, հիդրոմելիորացիա),

դ. ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր).

ե. տրանսպորտային (տրանսպորտային ուղիներ, ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, թունելներ, էստակադաներ, հենապատեր և այլն).

զ. կապ (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ).

2) Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը, որը դասակարգվում է I և II դասերի և ունի է հետևյալ ենթատեսակների ներդիրներ.

ա. Ճարտարապետաշինարարական փաստաթղթերի ճարտարապետական մաս (բացառությամբ պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների վերակառուցման և վերականգնման).

բ. քաղաքաշինության և տարածական պլանավորման մաս.

գ. պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների վերակառուցում, վերականգնում.

դ. ճարտարապետաշինարարական փաստաթղթերի կոնստրուկտորական մաս.

ե. էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր).

զ. ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարաման և գազամատակարարաման համակարգեր).

է. հիդրոտեխնիկական (հիդրոտեխնիկական կառուցվածքներ և համակարգեր, հիդրոմելիորացիա.

ը. ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր).

թ. տրանսպորտային (տրանսպորտային ուղիներ, ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, թունելներ, էստակադաներ, հենապատեր և այլն).

ժ. կապ (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ).

3) Շինարարության իրականացում, որը դասակարգվում է I, II և III դասերի, և ունի հետևյալ ենթատեսակների ներդիրներ.

ա. բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ.

բ. էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր.

գ. օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման, ջերմամատակարարաման և գազամատակարարաման համակարգեր.

դ. հիդրոտեխնիկական կառուցվածքների, համակարգերի և հիդրոմելորացիա.

ե. ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր.

զ. տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, թունելներ, էստակադաներ, հենապատեր և այլն).

է. կապ (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ).

4) Շինարարության որակի տեխնիկական հսկողությունը, որը դասակարգվում է I և II դասերի և ունի է հետևյալ ենթատեսակների ներդիրներ.

ա. բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ.

բ. էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր.

գ. օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման, ջերմամատակարարաման և գազամատակարարաման համակարգեր.

դ. հիդրոտեխնիկական կառուցվածքների, համակարգերի և հիդրոմելորացիա.

ե. ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր.

զ. տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, թունելներ, էստակադաներ, հենապատեր և այլն).

է. կապ (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ).

5) Հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցումը, որը դասակարգվում է I և II դասերի և ունի է հետևյալ ենթատեսակների ներդիրներ.

ա. շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն.

բ. ինժեներաերկրաբանական հետախուզում

գ. գեոդեզիական ծառայություններ

դ. անձնագրավորում:»:

5. Քաղաքաշինության բնագավառի լիցենզիաների դասակարգումը սահմանվում է, ըստ քաղաքաշինական գործունեության օբյեկտների ռիսկայնության աստիճանների, համապատասխանաբար.

1) I դասի լիցենզիան իրավունք է տալիս քաղաքաշինական գործունեություն իրականացնել I, II, III, IV և V ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական օբյեկտներում,

2) II դասի լիցենզիան իրավունք է տալիս քաղաքաշինական գործունեություն իրականացնել I, II և III ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական օբյեկտներում,

3) III դասի լիցենզիան իրավունք է տալիս քաղաքաշինական գործունեություն իրականացնել I և II ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական օբյեկտներում:

Հոդված 11. Օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Քաղաքաշինության բնագավառում շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 12. Անցումային և եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո, բացառությամբ 11.1-ին հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է՝

1) շինարարության որակի տեխնիկական հսկողության կարգը.

2) քաղաքաշինական փաստաթղթերի կազմման կարգը.

3) քաղաքաշինության բնագավառում լիցենզիա չպահանջող քաղաքաշինական աշխատանքների ցանկը.

4) օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեության իրավունք ունեցող մասնագետների ՇՄՌ կազմակերպման և հավաստագրման հինգ տարվա ժամանակացույց:

3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, բայց ոչ ուշ քան նախկինում տրված լիցենզիաների դադարեցման վերջնաժամկետը, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի լիցենզիաների դասակարգման և մասնագետների ըստ համապատասխան կարգերի հավաստագրման գործընթացը իրականացվում է քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից սահմանված կարգով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

1.1 Ներկայացված օրենսդրական նախագծի փաթեթով առաջարկվող իրավակարգավորումների անհրաժեշտությունը պայմանավորված է քաղաքաշինության բնագավառում պետական կառավարման մարմնի կողմից լիցենզավորման գործընթացի արդյունավետ իրականացմանը և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում առկա օրենսդրական բացերի լրացմանը: Ոչ լիարժեք և հստակ սահմանված լիցենզավորման և որակավորման պայմաններն ու պահանջները քաղաքաշինության բնագավառում գործող տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծում են անհավասար մրցակցային դաշտ, ինչը հակասում է լիցենզավորման գործընթացի օրենքով սահմանված նպատակներին:

1.2 «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և կարգավորում է լիցենզավորման հետ կապված հարաբերությունները (*«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, Հոդված 1*): Լիցենզիան լիցենզավորման ենթակա ***գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հավաստող պաշտոնական թույլտվություն է***, ինչպես նաև այդ իրավունքը հավաստող պաշտոնական փաստաթուղթ (*«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, Հոդված 3*): ***Լիցենզավորման գործընթացը***՝ կապված լիցենզիաների տրման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործողության կասեցման և դադարեցման հետ, ***իրականացվում է պետական մարմնի կողմից***՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով (*«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, Հոդված 3*): Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք ունեն իրավաբանական և ֆիզիկական անձինք: *Լիցենզիա ստացած ֆիզիկական անձն իրավունք ունի զբաղվելու այդ բնագավառում ձեռնարկատիրական գործունեությամբ միայն որպես անհատ ձեռնարկատեր, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի* (*«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, Հոդված 7*)*:* Լիցենզավորման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են միայն օրենքով և լիցենզավորման կարգերով: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի կողմից տրվող լիցենզիաների լիցենզավորման կարգերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (*«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, Հոդված 10*):

1.3 Գործող խմբագրությամբ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված աղյուսակի 17-րդ կետով սահմանված են քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության հետևյալ տեսակները՝

1) Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում (բացառությամբ կոնստրուկտորական մասի և շինարարության թույլտվություն չպահանջող աշխանքների),

2) Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների),

3) Շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների, համապատասխան նպատակի համար նախատեսված հողամասի տարածքում ոչ ձեռնարկատիրական նպատակով սեփականատիրոջ կողմից կառուցվող՝ 300 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող՝ մինչև երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տների, հաստատված բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտների, 150 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող օժանդակ շինությունների, 50 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ավտոտնակների, 1000 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ջերմոցների, 500 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող գյուղատնտեսական արտադրական նշանակության ոչ հիմնական շինությունների և 100 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող հասարակական նշանակության ոչ հիմնական շինությունների),

4)Շինարարության որակի տեխնիկական հսկողություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների, համապատասխան նպատակի համար նախատեսված հողամասի տարածքում ոչ ձեռնարկատիրական նպատակով սեփականատիրոջ կողմից կառուցվող՝ 300 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող՝ մինչև երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տների, հաստատված բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտների, 150 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող օժանդակ շինությունների, 50 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ավտոտնակների, 1000 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ջերմոցների, 500 քմ ընդհանուր մակերեսը

չգերազանցող գյուղատնտեսական արտադրական նշանակության ոչ հիմնական շինությունների և 100 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող հասարակական նշանակության ոչ հիմնական շինությունների),

5)Ինժեներական հետազննում,

6)Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն:

1.4 Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման գործընթացը և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների կիրարկումն ապահովվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հետևյալ որոշումներով՝

1)ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիս 2-ի «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 2-րդ կետով նախատեսված այլ դեպքերի) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N777-Ն,

2)ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիս 2-ի «Քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով հաստատված աղյուսակի 17-րդ բաժնի 3-րդ կետով նախատեսված այլ դեպքերի) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N775-Ն,

3)ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում ինժեներական հետազննման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N788-Ն,

4)ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի «Քաղաքաշինության բնագավառում շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության գործունեության լիցենզավորման կարգը և ձևը հաստատելու մասին» N774-Ն,

5)ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման (բացառությամբ կոնստրուկտորական

մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) և քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեությունների լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի N510-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1533-Ն,

6)ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեությամն զբաղվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասնագետների մասնագիտական որակավորման ստուգման կարգը հաստատելու մասին» N855-Ն:

1.5 Լիցենզավորման ենթակա գործունեության այն տեսակների համար, որոնց իրականացումը պահանջում է մասնագիտական գիտելիքներ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև լիցենզավորման կարգերով կարող են սահմանվել մասնագիտական որակավորման պայմաններ (*«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, Հոդված 13*): Քաղաքաշինության բնագավառում *շինարարության որակի տեխնիկական հսկողության, ինժեներական հետազննման, շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության* գործունեության տեսակների համար «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված է ***մասնագիտական որակավորման պահանջ***:

1.6 Քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմինը լիցենզավորման գործընթացի ապահովման ընթացքում բախվել է մի շարք խնդիրների, որոնց համակարգային լուծումները հնարավոր է ապահովել միայն սույն օրենսդրական նախագծով ներկայացված իրավակարգավորումների առկայության դեպքում: Քաղաքաշինության բնագավառում գործող լիցենզավորման կարգերով սահմանված պահանջները ***հակասում են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքին, ինչպես նաև օրենքով նախատեսված պահանջները հակասում են լիցենզավորման գործընթացի սկզբունքներին և նպատակներին:*** «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, ի թիվս այլ նպատակների, սահմանում է, որ *գործունեության առանձին տեսակներով զբաղվելու լիցենզավորման նպատակն է անձանց կյանքին, առողջությանը, գույքին,*

պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողության իրականացումը: Հետևաբար լիցենզավորման գործընթացն ապահովող նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները և պայմանները սահմանելիս պետք է ապահովվեն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված սկզբունքները: Այնուամենայնիվ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն հիմնավոր է համարում այն հանգամանքը, որ շինարարական աշխատանքներ իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պետք է համապատասխանեն օրենսդրությամբ սահմանված որոշակի չափորոշիչների:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն քաղաքաշինական փաստաթղթերը քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց են: Քաղաքաշինական փաստաթղթերի մշակման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ապահովման համար գործող իրավակարգավորումների համակարգային վերլուծության արդյունքում ի հայտ են եկել հետևյալ խնդիրները.

1.7 Լիցենզավորված իրավաբանական անձին լիցենզիային կից տրամադրվող ներդիրների իրավաչափությունը: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով սահմանվում են լիցենզիային կից ներդիրի տրամադրման հետ կապված հարաբերությունները: Համաձայն գործող իրավակարգավորումների լիցենզիային կից տրամադրվում է ներդիր, ***եթե լիցենզիայի տրամադրման համար նախատեսված է մասնագիտական որակավորման պահանջ, տեխնիկական որակավորման պահանջ կամ լիցենզավորման կարգերով սահմանված այլ պահանջներ և պայմաններ:*** Լիցենզավորող մարմնի կողմից նշված պահանջների բավարարումը ***հավաստվում է*** լիցենզային կից տրամադրվող ներդիրի միջոցով: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ *մասնագիտական որակավորման պահանջներ նախատեսող գործունեության տեսակների համար անձանց լիցենզիաներ տրամադրելիս լիցենզավորման կարգերով կարող են նախատեսվել այդ աշխատանքներն իրականացնող պատասխանատու անձանց լիցենզիայի ներդիրների տրամադրում, որը հաստատում է նրանց գիտելիքների*

համապատասխանությունը սահմանված պահանջներին: Նույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ *լիցենզավորման ենթակա գործունեության այն տեսակների համար, որոնց իրականացումը պահանջում է մասնագիտական գիտելիքներ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև լիցենզավորման կարգերով կարող են սահմանվել մասնագիտական որակավորման պահանջներ*: Գործող խմբագրությամբ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատված աղյուսակի 17-րդ կետով սահմանված են քաղաքաշինության բնագավառում ***քաղաքաշինական փաստաթղթեր ինժեներական բաժինների մշակման, քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության և շինարարության իրականացման համար մասնագիտական որակավորման պահանջ նախատեսված չէ:*** Սակայն նշված գործունեության տեսակների լիցենզավորման կարգերով ***նախատեսված է մասնագիտական որակավորման պահանջներ:***

1.8 ՀՀ կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման (բացառությամբ կոնտրուկտորական մասի, ինչպես նաև շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) և քաղաքաշինական փաստաթղերի փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեությունների լիցենզավորման կարգն ու լիցենզիաների ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի N510-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1533-Ն որոշմամբ հաստատվել է տվյալ գործունեության տեսակների լիցենզավորման կարգը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի փոփոխությամբ սահմանված պահանջների:

1.9 Գործող լիցենզավորման կարգերը և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները լիարժեք չեն ապահովում լիցենզավորման գործընթացի արդյունավետությունը և չեն նպաստում քաղաքաշինության բնագավառում անհրաժեշտ որակավորմամբ տնտեսվարող սուբյեկտների ձևավորմանը, չեն տարանջատում տարբեր որակավորում և փորձառություն ունեցող անձանց կամ կազմակերպությունների գործունեությունները: Լիցենզավորման կարգերով հաշվի չի առնվում քաղաքաշինական

գործունեության օբյեկտների բարդությունը, և ոչ լիարժեք սահմանված լիցենզավորման պայմանները ստեղծում են անհավասար մրցակցային դաշտ, ինչը հակասում է լիցենզավորման նպատակներին:

1.10 1998 թվականի մայիսի 5-ի խմբագրությամբ «Քաղաքաշինության մասին» ՀՕ-217 օրենքի (ստորագրվել է 1998 թվականի մայիսի 26-ին, ուժի մեջ է մտել 1998 թվականի հունիսի 9-ին) 6-րդ հոդվածի 4-րդ պարբերության «զ» կետի համաձայն՝ *Կառուցապատողները պարտավոր են ապահովել իրենց քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը, շահագրգիռ կողմերի հետ դրանց համաձայնեցումը, օբյեկտի շինարարության որակի տեխնիկական ու հեղինակային հսկողությունը՝* ***սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով***: Վկայակոչված օրենսդրական դրույթի կիրարկումը **ապահովվել է** 1998 թվականի ապրիլի 28-ի ՀՀ Քաղաքաշինության նախարարության «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ» N 44 հրամանով: Համաձայն N 44 հրամանի 1.1 կետի՝ *հրահանգը կարգավորում է ՀՀ տարածքում կառուցապատողների կողմից շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացնող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը:* Նույն հրամանի 3.1 կետով սահմանվում է, որ *Կառուցապատողը կազմակերպում է տեխնիկական հսկողությունը* ***լիցենզավորված մասնագիտական կազմակերպությունների կամ մասնագետների հետ ձևակերպված երկկողմ պայմանագրերով:*** Նույն հրամանը սահմանում է շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող լիցենզավորված մասնագիտական կազմակերպությունների կամ մասնագետների ***իրավունքները և պարտականությունները:*** 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ««Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումների կատարելու մասին» ՀՕ-494-Ն ՀՀ օրենքի (ստորագրվել է 2003 թվականի հունվարի 11-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի հունվարի 23-ին) 5-րդ հոդվածի համաձայն խմբագրվել է 1998 թվականի մայիսի 5-ի «Քաղաքաշինության մասին» ՀՕ-217 ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ սահմանելով, որ *Կառուցապատողները պարտավոր են ապահովել քաղաքաշինական օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը՝* ***օրենքով սահմանված կարգով:*** 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ««Քաղաքաշինության

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումների կատարելու մասին» ՀՕ-494-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով խմբագրվել է 1998 թվականի մայիսի 5-ի «Քաղաքաշինության մասին» ՀՕ-217 ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանելով, որ ***քաղաքաշինական սուբյեկտների իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:*** Նշված փոփոխությունների արդյունքնում առաջացել է **օրենսդրական բաց,** որի արդյունքում գործող խմբագրությամբ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով ***բացակայում են անհրաժեշտ իրավակարգավորումները շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող անձանց իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման կարգի վերաբերյալ:***

1.11 «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ «**Լիցենզիայի** կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզիաների էլեկտրոնային գրանցամատյաններից այլ անձանց տեղեկությունների տրամադրման, ինչպես նաև այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու, որակավորման քննությանը մասնակցելու համար գանձվում է պետական տուրք՝ օրենքով սահմանված կարգով և չափով: Լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար օրենքով կարող են նախատեսվել տարեկան տուրքեր:»: Սակայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով պետական տուրք է սահմանվել քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության **լիցենզիայի ներդիրների համար:**

1.12 Նախագծերի փաթեթի մշակումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում միջազգային չափանիշներին համապատասխանող քաղաքաշինության բնագավառում պատասխանատու մասնագետների (այսուհետ՝ մասնագետ) շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) համակարգի ներդրման միջոցով մասնագետների ունակությունների և գիտելիքների բարձրացման և կապալառու կազմակերպություններում մասնագիտական ծառայությունների որակի անընդհատ բարելավման անհրաժեշտությամբ:

Հայտնի է, որ քաղաքաշինության բնագավառում մասնագիտական կրթության և շարունակական մասնագիտական զարգացման գործընթացները գտնվում են բոլոր երկրների զարգացման և կառուցապատողներին որակյալ մասնագիտական ծառայությունների տրամադրման հիմքում: Միջազգային փորձը փաստում է, որ շարունակական մասնագիտական զարգացումը նպաստում է կապալառու կազմակերպությունների կողմից ծառայությունների որակի բարձրացմանը:

Միջազգային փորձը

Բազմաթիվ զարգացած երկրներում սահմանված է ՇՄԶ համակարգին անցնելու ընդհանուր պահանջներ, մասնավորապես՝ մասնագետների համար պարտադիր է համարվում տեսական գիտելիքների զարգացումը մասնագիտական դասընթացներին, սեմինարներին, սիմպոզիումներին մասնակցության միջոցով, գործնական հմտությունների զարգացումը գիտագործնական միջոցառումներին մասնակցության միջոցով, ինչպես նաև ինքնազարգացումը՝ օրինակ առցանց դասընթացների մասնակցության միջոցով, ինչի գնահատման համար սահմանված է կրեդիտային համակարգ: Վերոնշյալ միջոցառումները կազմակերպվում են մասնագետների մասնագիտական հասարակական կազմակերպությունների, ճարտարապետաշինարարական կազմակերպությունների կամ քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող այլ կազմակերպությունների կողմից: ՇՄԶ պահանջները չկատարելը կարող է ունենալ տարբեր հետևանքներ՝ նախազգուշացումից մինչև մասնագիտական գործունեության թույլտվության կասեցում կամ դադարեցում:

Մասնագիտական գործունեության թույլտվությունը որոշակի ժամանակային պարբերականությամբ պետք է թարմացվի և դա կապակցվում է ՇՄԶ կրեդիտների պահանջների կատարման հետ: Օրինակ, Բելգիայում, Իտալիայում և մի շարք այլ երկրներում ՇՄԶ-ն դարձել է իրավական պարտավորություն: Գերմանիայում ՇՄԶ պահանջված կրեդիտների չլրացնելը կարող է հանգեցնել տվյալ մասնագետի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցվող գումարի նվազեցմանը կամ մասնագետի ապահովագրության շրջանակում նրա գործունեության իրավունքի ետ կանչմանը: Շվեյցարիայում «Շինարարական մասնագիտությունների մասին» օրենքը սահմանում է

պարտադիր ուսուցման պահանջ և նախատեսում է ֆինանսական ներգործման միջոցներ ՇՄՋ պահանջները չկատարելու դեպքում: Գործունեության իրավունքի վերագրանցման համար մասնագետները պետք է ներկայացնեն փաստաթղթեր ՇՄՋ ծրագրերին մասնակցության և պահանջվող քանակի ՇՄՋ կրեդիտների վերաբերյալ:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացման օբյեկտիվ և արդյունավետ համակարգ, չի իրականացվում մասնագետների որակական մակարդակի գնահատման գործընթաց:

2. Առկա խնդիրներին առաջարկվող լուծումները.

2.1 Սույն օրենսդրական փաթեթով որպես ***առաջին հիմնական նպատակ*** առաջարկվում է հստակ սահմանել քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և գործող կարգավորումներում կատարել խմբագրություն: Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներն են՝

1) Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում,
2) Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն,
3) Շինարարության իրականացում,
4) Շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն,
5) Ինժեներական հետազննում,
6) Շենքերի և շինությունների տեխնիկական զննություն:

Քանի որ շենքերի և շինությունների տեխնիկական զննությունն ու ինժեներական հետազննումը իրականացվում է հաստատված կարգերի և մեթոդաբանութունների հիման վրա, ինչպես նաև կոնկրետ պատասխանատու անձանց միջոցով, նպատակահարմար է նշված ծառայությունների մատուցման համար տրամադրել *հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցման* մեկ լիցենզիա: ***Լիցենզավորված սուբյեկտը նշված գործունեությունները կարող է իրականացնել, եթե լիցենզիայի անբաժան մաս կազմող ներդիրում առկա է համապատասխան գրառում՝ գործունեության պատասխանատու***

անձի (անձանց) վերաբերյալ: Շենքերի և շինությունների անձնագրավորման գործընթացի իրականացման լիազորությունները նախատեսվում է վերապահել տեխնիկական վիճակի հետազննության ոլորտում լիցենզավորված իրավաբանական անձանց, որոնք կունենան ամբողջական մասնագիտական ներուժ՝ նախատեսվող գործընթացի բավարար մակարդակն ապահովելու նպատակով:

Նույն լիցենզիայում ավելացված է նաև շենքերի և շինությունների անձնագրավորման իրականացման ներդիրը, որը անվանվել է «Անձնագրավորում»: Հետևաբար ներկայացված օրենսդրական նախագծով առաջարկվում է սահմանել հետևյալ լիցենզիայի տեսակները՝

1) Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի

2) Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն,

3) Շինարարության իրականացում,

4) Շինարարության որակի տեխնիկական հսկողություն,

5) Հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցում:

Օրենսդրական նախագծով լիցենզավորման ենթակա բոլոր գործունեության տեսակների համար նախատեսված է մասնագիտական որակավորման պահանջ: Լիցենզավորված սուբյեկտը լիցենզավորման ենթակա գործունեությունը կարող է իրականացնել միայն պատասխանատու անձի միջոցով, որի վերաբերյալ տեղեկատվությունը պարտադիր կարգով ամրագրվում է լիցենզիային կից ներդիրում:

2.2 Ներկայացված օրենսդրական նախագծի ***երկրորդ հիմնական նպատակն է*** ստեղծել տնտեսվարող սուբյեկտների համար հավասար մրցակցային դաշտ, ինչպես նաև բարձրացնել մասնագիտական որակավորման պահանջներն ու պատասխանատվությունը:

Սահմանվում են օրենքում բացակայող մի շարք հիմնական հասկացություններ, ինչպիսիք են «քաղաքաշինության բնագավառում մասնագիտական գործունեություն իրականացնող պատասխանատու անձ», «շարունակական մասնագիտական զարգացում», «հավաստագրում» և այլն: Սահմանվում են օտարերկրացի մասնագետների և այլ պետություններում կրթություն ստացած անձանց համար Հայաստանի Հանրապետությունում

գործունեություն իրականացնելու պահանջները: Սահմանվում են նաև մասնագետների իրավունքներն ու պարտականությունները, ՇՄՋ կազմակերպման գործընթացը և հավաստագրմանը ներկայացվող հիմնական պահանջները:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանվում է ՇՄՋ հավաստագիր ստանալու համար պետական տուրքի չափաբաժիններ, համապատասխան կարգերի:

Հաշվի առնելով, որ շարունակական մասնագիտական զարգացումը համարվում է որակյալ պարտադիր պայման, անհրաժեշտ է Հայաստանում ևս ներդնել վերոնշյալ համակարգը:

Ստեղծել քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան կրթության, շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄՋ) ընթացքում ստացված տեսական գիտելիքների և գործնական հմտությունների գնահատման գործընթացի՝ թեստավորման կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները:

Բավարարել քաղաքաշինության բնագավառում առկա կադրային ներուժի մասով վարվող քաղաքականությունը:

Այդ նպատակով նախատեսվում է քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և մասնագետների որակավորումները բաժանել համապատասխանաբար դասերի և կարգերի՝ ըստ օբյեկտների ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների)՝

- Քաղաքաշինական փաստաթղթերի կազմման կամ շինարարության իրականացման համար.

1) բարձրագույն ռիսկայնության օբյեկտներ (I դաս),

2) միջինից բարձր ռիսկայնության օբյեկտներ (II դաս),

3) ցածր ռիսկայնության օբյեկտներ (III դաս):

- Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն, շինարարության որակի տեխնիկական հսկողություն, հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցման գործունեության տեսակների դեպքում.

1) բարձրագույն ռիսկայնության օբյեկտներ (I դաս),

2) միջինից բարձր ռիսկայնության օբյեկտներ (II դաս):

Քաղաքաշինության բնագավառում մասնագետները ըստ վերապատրաստման մակարդակի և քաղաքաշինության բնագավառում իրականացվող գործունեության տեսակի, աշխատանքային փորձի, կատարված աշխատանքների ծավալի և բարդության դասակարգվում են երեք կարգի՝ I, II և III:

Տարբեր ռիսկայնության աստիճանի քաղաքաշինական օբյեկտների շինարարության իրականացման, քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության կամ այլ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի համար ***լիցենզավորման կարգով նախատեսվում է սահմանել տարբեր պայմաններ և պահանջներ***: Իրավական որոշակիության ապահովման նպատակով ներկայացված օրենսդրական փաթեթով նախատեսվել է խմբագրել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը՝ սահմանելով քաղաքաշինական օբյեկտների դասակարգումը, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Սույն օրենսդրական փաթեթի ընդունման դեպքում նախատեսվում է լիցենզավորման գործընթացը կանոնակարգող տարբեր տարիներին ընդունված և ներկայումս գործող ենթաօրենսդրական ակտերը (Հայաստանի Հանրապետության կառավարության 02.07.2009թ. N777-Ն, 02.07.2009թ. N775-Ն, 20.07.2009թ. N788-Ն, 02.07.2009թ. N774-Ն, 27.12.2018թ. N1533-Ն որոշումներ) միավորել՝ սահմանելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման մեկ միասնական կարգ:

2.3 Օրենսդրական նախագծի ***երրորդ հիմնական նպատակն է*** կարգավորել շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության հետ կապված հարաբերությունները: Գործող կարգավորումների համաձայն շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողությունը իրականացվում է երկու առանձին սուբյեկտների կողմից:

2.5 Ներկայացված օրենսդրական նախագծի ***չորրորդ հիմնական նպատակն է*** ապահովել ինչպես սկսնակ, այնպես էլ գործող տնտեսվարող սուբյեկտների ոլորտում ազատ գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը՝ սկսնակներին առաջարկելով սկսել գործառույթները ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտներից: Սահմանված է պետական

տուրքի դրույքաչափ, որը տրվող լիցենզիայի ներդիրի համար չի գերազանցում ներկայումս գործող յուրաքանչյուր գործունեության տեսակի լիցենզիայի բոլոր ներդիրների դրույքաչափերի միասնական գումարին: Ուստի սահմանված պետական տուրքի դրույքաչափերի մասով համեմատական կարգով վերլուծություն կարելի է կատարել **միայն ցածր և միջին ռիսկայնության աստիճանի** լիցենզիաների յուրաքանչյուր ներդիրների համար: Ստորև ներկայացվում է վերջին տարիներին իրականացված հիմնական գործառույթներից, ՀՀ պետական բյուջե փաստացի մուտքերը:

Տրամադրվել է. 2016 թվականին՝ 209 լիցենզիա և 434 ներդիր, 2017 թվականին՝ 236 լիցենզիա և 503 ներդիր, 2018 թվականին՝ 204 լիցենզիա և 367 ներդիր, 2019 թվականին՝ 473 լիցենզիա և 1214 ներդիր, 2020 թվականին՝ 482 լիցենզիա և 987 ներդիր:

Դադարեցվել է. 2016 թվականին՝ 94 լիցենզիա և 175 ներդիր, 2017 թվականին՝ 97 լիցենզիա և 178 ներդիր, 2018 թվականին՝ 81 լիցենզիա և 167 ներդիր, 2019 թվականին՝ 60 լիցենզիա և 124 ներդիր, 2020 թվականին՝ 59 լիցենզիա և 128 ներդիր:

Որպես տարեկան պետական տուրք և տույժ 2016-2020 թվականներին ՀՀ պետական բյուջե փաստացի մուտք է եղել համապատասխանաբար՝ 324, 43 մլն, 344,65 մլն, 322,73 մլն, 355,08 մլն և 383,83 միլիոն ՀՀ դրամ, իսկ որպես կանխատեսում եղել է՝ 339,50 մլն, 343,58 մլն, 326,88 մլն, 347,10 մլն և 374,57 միլիոն ՀՀ դրամ:

3. Ակնկալվող արդյունքը.

3.1 Նախագծի ընդունմամբ ակնկալվում է քաղաքաշինության բնագավառում լիցենզավորվող սուբյեկտների համար ձևավորել հստակ, բարենպաստ և ամբողջական իրավական միջավայր՝ իրականացվելիք գործողությունների հստակ հերթականությամբ և հնարավորինս պարզեցված պայմաններով՝ փոխկապակցված կառուցապատվող օբյեկտի ռիսկայնության աստիճանի հետ:

3.2 Քաղաքաշինական սուբյեկտների վարկանիշային դասակարգումը կսահմանի տվյալ սուբյեկտի քաղաքաշինական գործունեությունը՝ հաշվի առնելով դրա տեխնիկական հնարավորությունների, անձնակազմի մասնագետների փորձառությունը, կատարված աշխատանքները և այլ չափորոշիչներ:

3.3 Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է յուրաքանչյուր քաղաքաշինական ոլորտի մասնագետների գործունեության, շարունակական որակավորմանն ուղղված հետևողական քայլերի ապահովմամբ (հետդիպլոմային մասնագիտական կրթության կարգ, հիմնական և նեղ մասնագիտությունների ցանկի հաստատում, շարունակական մասնագիտացման զարգացման կատարելագործման և լրացուցիչ մասնագիտացման անցկացման կարգ և պայմաններ, ուսումնական ծրագրեր, միջոցառումներ), լիցենզավորման գործընթացների հետագա կանոնակարգմամբ ու պարզեցմամբ, մասնագետների գրանցամատյանների ստեղծմամբ և վարմամբ կդյուրինացվի քաղաքաշինական սուբյեկտներում նրանց ներգրավման գործընթացը:

3.4 Լիցենզավորման համակարգում կներդրվի քաղաքաշինության բնագավառում միասնական ռեեստրի ստեղծման, կառուցվածքի վարման և մոնիթորինգի իրականացման համակարգը, որը ուղղված կլինի նաև Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությանը և դրա իրականացման 2019-2022 թվականների «4.3 Հակակոռուպցիոն կրթություն և իրազեկում» գլխի միջոցառումների ծրագրի կատարմանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵԼԻՔ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և ««Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծի ընդունման հետ կապված անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ կատարել նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին», ՀՀ օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն, 02.07.2009թ. N 777-Ն, 02.07.2009թ. N 775-Ն, 20.07.2009թ. N 788-Ն, 02.07.2009թ. N 774-Ն, 27.12.2018թ. N 1533-Ն 23.07.2009թ. N 855-Ն որոշումներում:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ և ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ և ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և ««Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում նախատեսվում է եկամուտների և ծախսերի հնարավոր ավելացում կամ հնարավոր նվազեցում:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և ««Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագիծը տեղադրված է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պաշտոնական www.minurban.am կայքում և իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am):